տունել զՀատիկն ձեր ընդ մեզ։ Նոյնպէս և մեք, թէպէտեւ աղքատ և նուաստ, այլ անկարելի է մեզ փոխել զսահմանս հարց մերոց, և արկանել զերկպառակութիւն և խռովութիւն 'ի մէջ ժողովրդոյն։ Այս է միտք և խորհուրդ իմ, զի դուք տունեսջիք զՀատիկն ձեր առանձին, յսրուտ աւուր և պատահեսցի։ Նոյնպէս եւ մեք 'ի ժամանակի մերում, միայն դիցուք պայման այսպիսի 'ի միջի։ զի յաւուր տունի Պասեքի ձերոյ՝ ոչ ոք մտցէ յեկեղեցի Ս։ Յարութեան յաղագէ մերմէ։ Նոյնպէս եւ 'ի Պասեքի մերում ոչ ոք մտցէ անդ յաղագէ ձերմէ բաց 'ի մշտնջենաւոր պաշտօնէից երկուց ազգաց, որք կան 'ի տաճարի անդ։ այսպէս երկաքանչիւր ազգ առանձին խաղաղութեամբ կատարեսցեն զՀատիկն իւրեանց։

Փոխանորդն Յունաց Մելէթիոս եպիսկոպոս լուեալ զայսպիսի բանս 'ի Պատրիարքէն Հայոց, հաճեցաւ ընդ խորհուրդս նորա հանդերձ միաբանակցովքն, և հաւանութեամբ խոստացաւ հաստատուն կալ 'ի վերայ բանիցս այսոցիկ։ Ի վերայ այսր բանից յաւել Գրիգոր ասել՝ ոչ այդպէս՝ այլ հաւատարմացուսցուք զմիմեանս 'ի Ս։ Աւետարանն, և դիցուք ուխտ և դաշինս յանուն Ամենասուրբ Երրորդութեան, զի մի' երեւեսցուք դաւաճան ընկերի՝ դնել որոգայթ միմեանց, այլ սիրով և խաղաղութեամբ անցուսցուք զտարիս, և թողցուք զկնի մեր յիշատակ բարի և զանուն լաւութեան։ գրեցէք դուք զայս ամենայն Պատրիարքին ձերոյ և ծանուցէք նմա, Նոյնպէս և մեք Պատրիարքին և ժողովրդոց մերոց 'ի Կոստանդինուպօլիս։ զի դուն դործեալ ջանասցեն հանել հրովարտակ յարքունուստ եւ առաքել յԵրուսաղէմ զմի ոմն 'ի մեծամեծաց Դրան՝ իբր ոստիկան և վերատեսուչ դործոյս, զի եկեալ նստցի 'ի դուռն տաճարին Ս։ Յարութեան, եւ մի' տացէ թոյլ ժողովրդոց միոյ ազգի 'ի Պասեքի միւսոյն։ Ի վերջոյ հաստատեալ զայսոսիկ պայմանս 'ի միջի իւրեանց՝ կնքեցին Տէրունական աղօթիւք՝ և ողջունեալ զմիմեանս մեկնեցան։

Ըստ այսմ պայմանի գրեցին Յոյնք առ Խրիմանթոս Պատրիարքն իւրեանց, որ էր այր խոհեմ եւ հանճարեղ՝ համբաւեալ գիտութեամբ եւ իմաստութեամբ 'ի մէջ ազգին իւրոյ։ Նոյնպէս և Շղթայակիր առ Յովհաննէս Պատ-